«ԿԱՆԱՆՑ ՕՐԱԿԱՐԳԸ՝ ՀԱՆՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ»

ՀՀ արտահերթ խորհրդարանական ընտրություններին ընդառաջ



ՀԱԿԱՍԱՐ քարոզարշավ

Հանուն կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների

Government Offices of Sweden

oxYGen

Wnet

«Կանանց օրակարգը՝ հանուն զարգացման» մշակվել է Շվեդիայի կառավարության կողմից ֆինանսավորվող՝ «ՀԱՎԱՍԱՐ. խթանելով կանանց քաղաքական մասնակցությունը ազգային մակարդակում» ծրագրի շրջանակներում, որն իրականացնում է ՕքսԵՋեն հիմնադրամը՝ ՊրոՄեդիա-Գենդեր ՀԿ-ի փորձագետների և WomenNet.am կայքի հետ համագործակցաբար:

2018թ.

«Հավասար» քարոզարշավը ներկայացնում է

«Կանանց օրակարգը՝ հանուն զարգացման»

ՀՀ արտահերթ խորհրդարանական ընտրություններին ընդառաջ

«Կանանց օրակարգի» հիմնական նպատակն է Ազգային ժողովի արտահերթ ընտրություններում առաջադրված կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների ուշադրությունը հրավիրել կանանց և տղամարդկանց հավասարությունն ապահովող հիմնախնդիրների վրա՝ ակնկալելով, որ ընտրվելու դեպքում նրանք ոչ միայն կբարձրացնեն այդ հարցերը խորհրդարանի ամբիոնից, այլև լուծումներ կառաջարկեն դրանց ուղղությամբ[1]:

Առաջնորդվելով այն մոտեցմամբ, որ խորհրդարանական կառավարման պայմաններում ՀՀ Ազգային ժողովի մաս կազմող քաղաքական ուժերն են պատասխանատվություն կրելու օրենսդրական դաշտի բարելավման և գործադիր իշխանության կողմից իրականացվող քաղաքականության համար՝ **առաջարկում ենք օրենսդիր մարմնում ներկայացված լինելու հավակնություններ ունեցող քաղաքական ուժերին հստակեցնել իրենց վերաբերմունքը երկրի զարգացման գործընթացներում կանանց և տղամարդկանց հավասար մասնակցությունն ապահովող հիմնախնդիրների վերաբերյալ, ինչը հնարավորություն կտա այս խնդիրներով մտահոգ հանրությանը կողմնորոշվելու իրենց ընտրության հարցում:**

1. **Կողմնակի՞ց եք արդյոք ՄԱԿ-ի կողմից Կայուն զարգացման նպատակների շրջանակում առաջադրված 50/50 մասնակցային բանաձևին, որը ենթադրում է կանանց և տղամարդկանց հավասար ներգրավում քաղաքականության, տնտեսության մեջ, սոցիալական կյանքում և հավասար ներկայացվածություն որոշումների ընդունման մակարդակում:**

2. **Ի՞նչ քայլեր եք ձեռնարկելու ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածով ամրագրված կանանց և տղամարդկանց փաստացի հավասարության խթանման ուղղությամբ:**

3. **Ի՞նչ քայլեր եք պատրաստ ձեռնարկելու «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի իրագործման ուղղությամբ:**

4. **Պատրա՞ստ եք արդյոք հետևողականություն ցուցաբերել ընտանեկան բռնության կանխարգելմանը վերաբերող օրենսդրական դաշտը բարելավելու ուղղությամբ և նպաստել «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի վավերացմանը:**

5. **Նախատեսու՞մ եք արդյոք կյանքի կոչել ՀՀ գենդերային քաղաքականության հայեցակարգի շրջանակում հռչակված սկզբունքները և հաշվի առնել սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում կանանց և տղամարդկանց շահերն ու կարիքները:**

6. **Պատրաստ ե՞ք արդյոք քայլեր նախաձեռնել կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովումը երաշխավորող ազգային մեխանիզմի ձևավորման ուղղությամբ՝ համապատասխան քաղաքականության համակարգումն արդյունավետ իրականացնելու նպատակով:**

[1] Օրակարգի հարցադրումները հիմնված են ՀՀ Սահմանադրության, ՀՀ գենդերային քաղաքականության հայեցակարգի շրջանակում ընդունված օրենքների և ծրագրերի, Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների, ՀՀ վիճակագրական տվյալների, հանրապետությունում անցկացված վերջին ուսումնասիրությունների և սոցիոլոգիական հարցումների վրա:

7. **Հստակեցրե՞լ եք արդյոք ձեր վերաբերմունքը հետևյալ հիմնախնդիրների նկատմամբ՝**

- կանանց ոչ բավարար ներկայացվածությունը իշխանության բոլոր ճյուղերում և մակարդակներում.
- կանանց ներուժի ոչ արդյունավետ օգտագործումը և աշխատանքի շուկայում կանանց նկատմամբ խտրականության առկայությունը, աշխատանքային և ընտանեկան պարտականությունների համատեղման հնարավորությունների պակասը,
- կանանց և երեխաների, կին գլխավորով տնային տնտեսությունների առավել խոցելիությունը աղքատության տեսանկյունից.
- գյուղաբնակ կանանց առավել խոցելիությունը ռեսուրսների և ծառայությունների հասանելիության տեսանկյունից.
- հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ կրկնակի խտրականությունը և լիարժեք սոցիալական ներառման համար հնարավորությունների բացակայությունը.
- կանանց առաջընթացը խոչընդոտող գենդերային կարծրատիպերի վերարտադրումը կրթության համակարգի և ԶԼՄ-ների միջոցով.
- կանանց համար առողջապահական ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունն ապահովող քաղաքականության լուրջ թերացումները:

Առաջարկում ենք վերը նշված հիմնախնդիրներով մտահոգ բոլոր կազմակերպություններին միանալ օրակարգին:

Օրակարգը բաց է առաջարկությունների և դիտողությունների համար:

Մի շարք հիմնախնդիրների հետ կապված վիճակագրություն և դրանց լուծմանն ուղղված առաջարկներ

Հիմնախնդիր 1

Կանայք չեն մասնակցում երկրի զարգացմանը վերաբերող որոշումների կայացմանը. նրանք բավարար ներկայացված չեն իշխանության գրեթե բոլոր ճյուղերում և մակարդակներում

Փաստեր

- Վերջին՝ վեցերորդ գումարման ՀՀ Ազգային ժողովի կազմում կին պատգամավորներն ընդամենը 18% են կազմում, անկախության տարիների ընթացքում օրենսդիր մարմնում կանանց թվի ավելացման տեմպերը բավարար չեն Կայուն զարգացման նպատակների և այլ միջազգային պարտավորությունների շրջանակում կանանց ու տղամարդկանց հավասար ներկայացվածությունը խորհրդարանում և որոշումների ընդունման մակարդակում ապահովելու համար:
- ՀՀ նախարարների կաբինետի կազմում ընթամենը 2 կին է ընգրկված (11,7%), իսկ 62 փոխնախարարների թվում 10-ն են կին (16%) (2018 թ. հունիսի տվյալներով):
- Մարզպետների թվում կանայք չկան, 30 փոխմարզպետներից հինգն են կանայք, 49 քաղաքների ղեկավարների թվում միայն 2018 թ. հոկտեմբերին կայացած ընտրություններում մեկ կին է ընտրվել, այն էլ՝ առաջին անգամ ՏԻՄ համակարգի ներդրումից հետո:
- ՏԻՄ-երի գոյության 20 տարվա ընթացքում կանանց թիվը համայնքների ղեկավարների թվում չի գերազանցել 2%-ը: Ներկայումս այդ թիվը զգալիորեն իջել է՝ Հայաստանի 502 համայնքներից միայն 8-ն են կանայք ղեկավարում (1,6%), իսկ 3830 ավագանու անդամներից միայն 401-ն են կանայք, ինչը 10,5% է կազմում[2]:
- Որոշակի առաջընթաց, այն էլ՝ քվոտայի կիրառման շնորհիվ, արձանագրվել է միայն Երևանի ավագանու կազմում, որտեղ կանայք 27,6% են կազմում, ինչպես նաև Գյումրու և Վանաձորի ավագանու կազմում կին անդամները 24% են:
- Ղեկավար պաշտոններ զբաղեցնող տղամարդկանց թիվը 2,4 անգամ գերազանցում է կանանց թիվը[3]:

Առաջարկություններ

- Բարձրացնել գենդերային քվոտան և ապահովել այլ մեխանիզմներ, որոնք կերաշխավորեն կանանց և տղամարդկանց հավասար՝ 50/50 ներկայացվածությունը Ազգային ժողովում, գործադիր մարմնի նշանակովի պաշտոններում, ՏԻՄ համակարգում:
- Մշակել կուսակցությունների ներսում կանանց առաջմղման մեխանիզմներ, իրականացնել միջոցառումներ կին առաջնորդների պատրաստման ուղղությամբ:
- Ներառել գենդերային հավասարության բաղադրիչը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կադրային քաղաքականության մեջ՝ ձևավորելով համապատասխան մասնագետների կադրային ռեզերվ:
- Ընդլայնել գենդերային մոդուլը պետական ծառայողների վերապատրաստման ծրագրերում:
- Ընդունել ՀՀ-ում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման քաղաքականության իրականացման 2018-2022 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը[4]:

[2] Հայաստանի կանայք և տղամարդիկ, Վիճակագրական գրքույկ, ՀՀ ՎԿ, 2018:
[3] Նույն տեղում:
[4] https://www.e-draft.am/projects/731/about

Հիմնախնդիր 2

Կանանց ներուժի ոչ արդյունավետ օգտագործում, աշխատանքի շուկայում կանանց նկատմամբ խտրականության վերացում, աշխատանքի և երեխայի խնամքի համատեղման հնարավորությունների ստեղծում

Փաստեր

- Կանանց աշխատանքի սահմանափակման և նրանց նկատմամբ աշխատանքի շուկայում գոյություն ունեցող խտրականության հետևանքով Հայաստանը համախառն ներքին արդյունքի տարեկան ցուցանիշում առնվազն 50-60 մլն դոլար է կորցնում:

- Կանանց մասնաբաժինը աշխատանքային ռեսուրսների կազմում 55% է, սակայն տնտեսապես ակտիվ է (զբաղված է կամ փնտրում է աշխատանք) կանանց 52,8%-ը, իսկ տղամարդկանց՝ 70, 7%-ը[5], ընդ որում, կանանց և տղամարդկանց տնտեսական ակտիվության խզումը 25-34 տարիքային խմբում 40% է:

- Կանանց միջին աշխատավարձը ցածր է տղամարդկանց աշխատավարձից 32,5%-ով, թեև զբաղված կանանց և տղամարդկանց կրթական մակարդակը գրեթե նույնն է. կանանց 30,3%-ը և տղամարդկանց 28,1%-ը ունի բարձրագույն կամ հետբուհական կրթություն:

- Գործազրկության մակարդակը Հայաստանում ամենաբարձրն է ԱՊՀ երկրներից[6]. կանանց շրջանում այն 17,8% է, իսկ տղամարդկանց շրջանում՝ 18,1%: Դրա հետ մեկտեղ կան էական գենդերային տարբերություններ գործազրկության տևողության և չաշխատելու պատճառների մեջ: Պաշտոնապես գրանցված գործազուրկների 70%-ը կանայք են, ընդ որում, երկարատև գործազրկության մակարդակը հատկապես բարձր է կանանց շրջանում՝ կազմելով գործազուրկ կանանց 57%-ը[7]:

- Տնտեսապես ոչ ակտիվ բնակչության 66%-ը կանայք են, ինչը հիմնականում պայմանավորված է կանանց ընտանեկան պարտականություններով (հղիություն, ծննդաբերություն, տնային տնտեսություն, երեխաների և տարեցների խնամք և այլն):

  - Տնտեսապես ոչ ակտիվ կանանց մեծ մասը տնային տնտեսուհիներն են, ընդ որում, այդ կանանց 40 տոկոսը բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթություն ունի:

  - Կանայք կատարում են տնային տնտեսություններում չվճարվող աշխատանքի մեծ մասը, որը չի ստանում արժեքային որևէ գնահատում և չի արտացոլվում ազգային հաշիվների համակարգում:

  - Ընտանեկան հանգամանքներով չաշխատողների թվում 99%-ը կանայք են, ինչը վկայում է այն մասին, որ ընտանեկան պարտականությունների և կարիերայի համատեղման հարցում պետական աջակցության միջոցներն անբավարար են:
  - Կանանց չաշխատելու պատճառները փոխկապակցված են նախադպրոցական հաստատություններում երեխաների ցածր ընդգրկվածության խնդրի հետ. 2017 թ. տվյալներով (0-5 տարեկան բնակչության թվաքանակից) երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններում կազմել է 30%, քաղաքներում՝ 35,6%, գյուղերում՝ 17,2%: Հատկապես ցածր է ընդգրկվածությունը 0-2 տարեկան երեխաների շրջանում՝ կազմելով ընդամենը 4,8%:

[5] Հայաստանի կանայք և տղամարդիկ, Վիճակագրական զրքույկ, ՀՀ ՎԿ, 2018:
[6] http://www.cisstat.com/
[7] Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, ԱՎԾ, 2017:

- Հայաստանի բնակչության վերարտադրողական վարքագծի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ թեև հարցված կանայք (42%) և տղամարդիկ (36%) նախընտրում են ունենալ 3 երեխա, սակայն նրանց մեծ մասը՝ 50%-ից ավելին, ունեցել է 2 երեխա, իսկ 20,5%ը՝ մեկ երեխա: Մի շարք պատճառների թվում նշվել են համապատասխան աշխատատեղի և արժանի վարձատրության բացակայությունը, ինչպես նաև հարցվածների կեսից ավելին անբավարար է գնահատել պետական աջակցությունը երեխայի խնամքի կազմակերպման հարցում, աշխատանքի և երեխայի խնամքը համատեղելու հնարավորությունները[8]:
- Երիտասարդները (16-30 տարեկան) աշխատաշուկայում շարունակում են մնալ որպես կայուն խոցելի խումբ՝ տնտեսական ակտիվության 47,9%, զբաղվածության 30,3% ցածր մակարդակով և գործազրկության 36,7% բարձր մակարդակով: 2017 թ. տվյալներով՝ 15-29 տարեկան իգական սեռի երիտասարդների գրեթե 46%-ը և արական սեռի երիտասարդների 23%-ը չէր սովորում և չէր աշխատում[9]:
- Կանանց մասնաբաժինը ՀՀ խոշոր, միջին և փոքր բիզնեսում չի գերազանցում 10%-ը: Միկրոբիզնեսում կանանց մասնաբաժինը ավելի մեծ է՝ 20-25%[10]:
- 2017-ի տվյալներով, աղքատության մակարդակը Հայաստանում կազմել է 25.7%, ինչը նշանակում է, որ երկրում ամեն չորրորդ քաղաքացին վերին աղքատության գծից՝ ամսական 41 612 ՀՀ դրամից ցածր գումարով է ապրում: Աղքատների 55,7%-ը կանայք են, 44,4%-ը՝ տղամարդիկ[11]:
- Կնոջ գլխավորությամբ տնային տնտեսությունների աղքատության մակարդակը ավելի բարձր է տղամարդու գլխավորությամբ տնային տնտեսությունների աղքատության մակարդակից՝ 29.2%՝ 24.4%-ի դիմաց: Միջին հանրապետական մակարդակի համեմատ՝ մինչև 6 տարեկան երեխա ունեցող կնոջ գլխավորությամբ տնային տնտեսություններն աղքատ լինելու ավելի մեծ (1.6 անգամ) ռիսկ ունեն, հատկապես քաղաքային բնակավայրերում կնոջ գլխավորությամբ տնային տնտեսությունների աղքատության մակարդակը 42,1%-ի է հասնում[12]:

Առաջարկություններ

- ՀՀ աշխատանքային օրենսգրքի վերանայման ընթացքում հաշվի առնել աշխատանքի շուկայում կանանց հատուկ կարիքները՝ այդ թվում ընդլայնելով աշխատանքային և ընտանեկան պարտականությունների համատեղման հնարավորությունները:
- Ներդնել կանանց զբաղվածությանը և նրանց տնտեսական հզորացմանն ուղղված ծրագրեր, ներառյալ տնայնագործությունը և տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ աշխատանքը:
- Ներդրումային քաղաքականության շրջանակում հաշվի առնել այն արտադրությունների զարգացումը, որոնք կանանց զբաղվածություն են ապահովում:
- Ներդնել կանանց ձեռներեցությունը խթանող հատուկ ծրագրեր՝ ներառելով բիզնես խորհրդատվություններ տրամադրող ծառայությունները:
- Ապահովել կանանց համար ընտանեկան և մասնագիտական պարտականությունները համատեղելու հնարավորությունները, աջակցել ընտանեկան պարտականությունների հավասար բաշխման և փոխադարձ հարգանքի վրա հիմնված ընտանիքի մոդելների քարոզչությանը:
- Մշակել և ներդնել մինչև երեք տարեկան երեխա խնամող աշխատող մայրերին՝ երեխայի խնամքի աջակցության գործուն մեխանիզմներ, մոդելներ և ենթակառուցվածքներ:

[8] ՀՀ բնակչության վերարտադրողական վարքագծի ուսումնասիրություն, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ, 2017
[9] Հայաստանի կանայք և տղամարդիկ, Վիճակագրական գրքույկ, ՀՀ ՎԿ, 2018:
[10] Gender policy in Armenia and the right of women entrepreneurship http://employers.am/News.aspx?NewsId=39&lang=eng
[11] Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, ԱՎԾ, 2017:
[12] Նույն տեղում:

- Ընդլայնել նախադպրոցական հիմնարկների ցանցը, ստեղծել և զարգացնել դայակների ինստիտուտը, աջակցել կանանց, ովքեր երեխա ունենալուց հետո ուզում են պահպանել իրենց մրցունակությունը աշխատաշուկայում՝ տարաբնույթ ադապտացիոն մասնագիտական ծրագրերի միջոցով:
- Ոչ ֆորմալ ոլորտում (չգրանցված) աշխատող կանանց տրամադրել սոցիալական պաշտպանվածության, մայրության պաշտպանության և երեխայի խնամքի հնարավորություններ:
- Քայլեր գործադրել Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի ՀՀ 5-րդ և 6-րդ պարբերական զեկույցների եզրափակիչ դիտարկումների շրջանակում կանանց աշխատանքային իրավունքների և ձեռներեցության զարգացման վերաբերյալ արված հանձնարարականների իրականացման ուղղությամբ:
- Նպաստել Հայաստանում կանանց և տղամարդկանց համար հավասար աշխատանքային իրավունքների ապահովմանն ուղղված նախաձեռնությունների իրականացմանը[13]:

Հիմնախնդիր 3

Գյուղի կանայք առավել խոցելի են ռեսուրսների և վարկերի հասանելիության, հողի սեփականության, ոռոգման և ջրամատակարարման, տեխնիկայի օգտագործման, արտադրանքի իրացման, տրանսպորտի և այլ ենթակառուցվածքների բացակայության տեսանկյունից:

Փաստեր

- Գյուղատնտեսության ոլորտում զբաղված է հանրապետության աշխատանքային ռեսուրսների 31,3%-ը, որոնց թվում կանայք կազմում են 53%, ինչը նրանց դարձնում է գյուղատնտեսության զարգացման կարևոր մասնակից[14]:
- Ոչ ֆորմալ (չգրանցված) զբաղվածության պարագայում գյուղի կանանց մեծ մասը զրկված է սոցիալական երաշխիքներից:
- Գյուղական վայրերում տնային տնտեսությունների 27,3%-ը գլխավորում են կանայք (հանրապետության կտրվածքով՝ 34%-ը), ընդ որում, այդ տնտեսություններն իրենց մեկ շնչին ընկնող եկամուտներով գրեթե կրկնակի զիջում են տղամարդկանց կողմից ղեկավարվող տնտեսությունների եկամուտներին և ավելի ցածր են իրենց կենսամակարդակով:
- Կին գլխավորով տնային տնտեսություններն առավել խոցելի են գյուղտեխնիկայի բացակայության, հողակտորների դժվար հասանելիության, ոռոգման հնարավորությունների և ֆինանսական միջոցների հետ կապված խնդիրների պատճառով:
- Կանայք գրեթե չեն մասնակցում իրենց համայնքներին վերաբերող որոշումների կայացմանը՝ փաստորեն զրկվելով իրենց շահերն արտահայտելու հնարավորությունից:
- Մինչ այս պահը կայացած բոլոր խոշորացված համայնքների ընտրություններում կանանց տոկոսային ներկայացվածությունն ավագանիներում 2-3 անգամ նվազել է: Արդյունքում՝ 453 գյուղական համայնքներից միայն 7-ն են ղեկավարում կանայք (1,5%), իսկ ավագանու անդամների կազմում կանայք կազմում են միայն 10%:

Առաջարկություններ

- Ձեռնարկել միջոցներ գյուղատնտեսության ոլորտում զբաղված կանանց համար սոցիալական երաշխիքների ընդլայնման ուղղությամբ:
- Օժանդակել կառավարությանը տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվությունը բարձրացնելու հարցում՝ գյուղական բնակավայրերում

[13] Այդ թվում նպատակ մասնակցային քննարկումների արդյունքում մշակված Հայաստանում կանանց և տղամարդկանց համար հավասար աշխատանքային իրավունքների ապահովման ճանապարհային քարտեզի ընդունմանը և իրագործմանը:
[14] Հայաստանի կանայք և տղամարդիկ, Վիճակագրական գրքույկ, ՀՀ ՎԿ, 2018:

տրանսպորտային և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրերի մշակման և իրականացման նպատակով:

- Գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման խթանումն իրականացնել գենդերային ուղղորդմամբ՝ զարգացնելով կանանց ներգրավումը կոոպերատիվներում:
- Մշակել մեխանիզմներ՝ ուղղված որոշումների կայացման գործընթացներում, ներառյալ համայնքային որոշումների կայացմանը և զարգացման ծրագրերի մշակմանը գյուղի կանանց ակտիվ մասնակցության ապահովմանը:

Հիմնախնդիր 4

Հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ խտրականության բացառում և լիարժեք սոցիալական ներառման ապահովում

Փաստեր

- Հայաստանում հաշվառված է հաշմանդամություն ունեցող 205 166 մարդ, այդ թվում՝ 99 888 կին[15]: Ի տարբերություն հաշմանդամություն ունեցող տղամարդկանց, կանայք կրկնակի խոցելի են. հաշմանդամություն ունեցող կանայք ավելի շատ են ենթարկվում խտրականության, ինչպես նաև հոգեբանական, ֆիզիկական և սեռական բռնության: Նրանք հավելյալ խնդիրներ ունեն՝ կապված վերարտադրողական առողջության հետ:
- Հաշմանդամություն ունեցող յուրաքանչյուր 6 երեխայից մեկը կամ 16%-ն ապրում կամ սովորում է մանկատանը կամ հատուկ տիպի գիշերօթիկ դպրոցում: Ավելին, հաշմանդամություն ունեցող աղջիկներին համեմատաբար ավելի հաճախ են հանձնում մանկատուն, քան տղաներին, և նրանց ավելի քիչ են այցելում:
- Հասարակությունից մեկուսացվելու աղջիկների ռիսկն ավելի մեծ է: Հաշմանդամություն ունեցող տղաների 5%-ը և աղջիկների 7%-ը երբեք դուրս չի գալիս տնից կամ դուրս է գալիս միայն բժշկին այցելելու նպատակով:
- Հաշմանդամություն ունեցող 5 երեխաներից 1-ը կամ 18%-ը, այդ թվում՝ տղաների 17%-ը և աղջիկների 21%-ը, դպրոց չի հաճախում: Հենաշարժական և/կամ մտավոր խնդիրներ ունեցող երեխաների խմբում այս ցուցանիշը կազմում է 26-27%: Դպրոց չհաճախելու լրացուցիչ խոչընդոտ են նաև կարծրատիպային բնույթի պատճառները: Առավել խոցելի են այդ առումով հաշմանդամություն ունեցող աղջիկները:

Առաջարկություններ

- Ներառական հասարակության ձևավորմանն ուղղված պետական քաղաքականության և ծրագրերի մեջ հաշվի առնել գենդերային բաղադրիչը՝ հաշմանդամություն ունեցող կանանց հատուկ կարիքներին արձագանքելու նպատակով:
- Հանրապետությունում ներդրվող համընդհանուր ներառականության համակարգի շրջանակում ապահովել գենդերային զգայուն մոտեցումներ:
- Մշակել և իրագործել հատուկ միջոցառումներ հաշմանդամություն ունեցող կանանց ու աղջիկների համար կարծրատիպային բնույթի լրացուցիչ խոչընդոտները հաղթահարելու և նրանց համար կրթության, զբաղվածության, առողջապահության, սոցիալական կյանքի և որոշումների ընդունման գործընթացների հասանելիությունը խթանելու նպատակով:

[15] 2017 թ. դրությամբ, http://www.mlsa.am/?page_id=1308

Հիմնախնդիր 5

Կանանց առաջընթացը խոչընդոտող գենդերային կարծրատիպերի վերարտադրումը կրթության համակարգի և ԶԼՄ-ների միջոցով

Փաստեր

- Կրթության համակարգը և ԶԼՄ-ները հանդիսանում են գենդերային կարծրատիպերը վերարտադրող և ամրապնդող կարևորագույն սոցիալական ինստիտուտներ:
- Դասագրքերը նպաստում են կնոջ և տղամարդու սոցիալական դերերի, վարքականոնների մասին պատկերացումների ձևավորմանը, մինչդեռ առկա դասագրքերն աչքի են ընկնում գենդերային խիստ անհավասարակշռությամբ՝ սովորողների գիտակցության մեջ ձևավորելով միայն ակտիվ, նախաձեռնող, նվաճող, պաշտպանող, ստեղծագործող տղամարդու կերպարը:
- Հեռուստատեսությամբ ցուցադրվող տեղական և օտարերկրյա սերիալները խեղված արժեքներ են ձևավորում՝ ամենաաղավաղված ինստիտուտը ընտանիքն է, ամուսին-կին կամ տղամարդ-կին հարաբերություններում քարոզվում է տղամարդ բռնարարի կերպարը, իսկ կանանց դեպքում գերիշխում է չաշխատող և միայն «շահավետ» ամուսնության հարցով մտահոգ կնոջ կերպարը[16]:
- Հետազոտությունները ցույց են տալիս, որ 86%-ը այն մարդկանց, ում մասին կարդում են հայաստանյան լրատվամիջոցներում, տղամարդիկ են, որ ողջ տեղեկատվական հոսքի միայն 10%-ն է հատկացված կանանց, որ փորձագիտական կարծիքը նույնպես պատկանում է տղամարդկանց՝ 8 տղամարդ փորձագետ և միայն 1 կին փորձագետ հարաբերակցությամբ[17]:
- ԶԼՄ-ների հրապարակումները շարունակում են վերարտադրել տղա երեխայի նախապատվության համար հիմք հանդիսացող մի շարք կարծրատիպեր[18], որոնք հիմք են հանդիսանում՝ նպաստելով պտղի սեռի խտրական ընտրության[19] երևույթի առկայությանը:

Առաջարկություններ

- Ներառել գենդերային բաղադրիչը հատկապես լրագրողների մասնագիտական ուսուցման մեջ, աջակցել գենդերային զգայուն քաղաքականության ձևավորմանը ԶԼՄ-ներում:
- Ապահովել հրատարակվող դպրոցական դասագրքերի գենդերային փորձաքննությունը:
- Ներառել կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ներկայացման խնդիրը կրթության ոլորտի բոլոր չափորոշիչներում, մշակվող ուսումնամեթոդական համալիրներում, ծրագրերում, դասագրքերում և ուսումնական ձեռնարկներում:
- Ներառել հանրակրթական դպրոցների և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների անձնակազմի վերապատրաստման ծրագրերում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների, սեռի հատկանիշով բռնության կանխարգելման վերաբերյալ թեմաները, նախատեսել վերապատրաստման ծրագրերի գենդերային փորձաքննության անցկացում:
- Աջակցել տեղեկատվական քարոզարշավների կազմակերպմանը՝ բացահայտելով պտղի սեռի խտրական ընտրության պատճառահետևանքային ողջ շղթան՝ այդ թվում շեշտադրելով գենդերային անհավասարությունը որպես հիմնական պատճառ:

[16] Հայաստանի ԶԼՄ-ների, հասարակական կարծիքի և նախընտրությունների մասին» հետազոտության «Կնոջ կերպարը գովազդում» հետազոտության , Կովկասյան ռեսուրս կենտրոնի հայաստանյան գրասենյակ, 2013:
[17] «Կնոջ կերպարը հայ մամուլում» հետազոտություն, ՄԱԲՀ, 2011:
[18] Զանգվածային լրատվության առցանց միջոցներում սեռի ընտրության թեմայի մշտադիտարկում, Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, 2016:
[19] Հայաստանում նորածինների սեռերի հարաբերակցությունը խախտվել է դեռևս վաղ 1990-ականներից և ներկայումս կազմում է 1.10 կամ 110 տղա՝ 100 աղջկա հաշվով (բնական հարաբերակցությունը յուրաքանչյուր աղջկա հաշվով 1.04-1.06 է): Ու թեև 2005 թվականի համեմատ (1.16) այդ ցուցանիշը նվազման միտումներ է արձանագրում, այն դեռևս բարձր է և շարունակվելու դեպքում կարող է հանգեցնել լուրջ ժողովրդագրական հետևանքների: Սեռերի հարաբերակցության գործակիցը հատկապես աճում է երրորդ կարգի ծնունդների դեպքում՝ հասնելով 1.30-ի՝ 111 տղա՝ 100 աղջկա հաշվով:

Հիմնախնդիր 6

Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և բռնության ենթարկված անձանց պետական աջակցության մեխանիզմների ստեղծում

Փաստեր

- Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտության տվյալներով՝ ֆիզիկական կամ սեռական բռնության ենթարկված 10 կանանցից 4-ը երբեք չեն դիմել օգնության և ոչ մեկին չեն պատմել բռնության մասին[20]:
- ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից 2016 թվականին անցկացված «Տղամարդիկ և գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում» սոցիոլոգիական հետազոտության տվյալներով՝ հայ հասարակությունը հակված է արդարացնելու կանանց նկատմամբ բռնությունը. «Կինը ծեծի է արժանի որոշ դեպքերում» պնդմանը համաձայնել է հարցվածների 27,7%-ը, այսինքն՝ յուրաքանչյուր 4-րդն արդարացնում է բռնությունը:
- 2017 թ. ընթացքում քննվել է ընտանեկան բռնության 793 դեպք, որից 196-ով հարուցվել են քրեական գործեր (որից 44-ն ուղարկվել են դատարան, 152-ը կարճվել են), 597 նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է:
- Խնդրով զբաղվող հասարակական կազմակերպությունների թեժ գծերով տարեկան մոտ 2 հազար ահազանգ է ստացվում ընտանեկան բռնության մասին:
- Պաշտոնական տվյալներով՝ անչափահասների նկատմամբ սեռական ոտնձգությունների՝ բռնաբարություն և այլն, դեպքերի 47%-ը տեղի է ունենում ընտանիքում:
- 2010-2017 թթ. ժամանակահատվածում 50 կին է սպանվել ընտանեկան բռնության հետևանքով, 2018-ի սկզբից արդեն 9 մահ է գրանցվել:

Առաջարկություններ

- Վավերացնել Հայաստանի Հանրապետության կողմից «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (Ստամբուլի կոնվենցիա):
- Ստեղծել կանանց նկատմամբ բռնության կանխարգելման, բռնության ենթարկվածների պաշտպանությանը և բռնություն կիրառողների հետապնդմանն ուղղված գործող մեխանիզմներ:
- Ընդունել ՀՀ կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի ազգային ծրագիր:
- Հստակեցնել «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի կիրարկման մեխանիզմները:

Հիմնախնդիր 7

Առողջապահական ծառայությունների հասանելիության և մատչելիության ապահովում, մայրական և մանկական մահացության ցուցանիշների նվազեցում

Փաստեր

- Հայաստանում մայրական մահացության ցուցանիշը կազմում է 25՝ 100.000 կենդանի ծնվածիհաշվով. այս ցուցանիշը 1,5 անգամ ցածր է ԱՊՀ երկրների միջին ցուցանիշի (29,0) համեմատությամբ, սակայն գրեթե 5 անգամ բարձր է եվրոպական միջինից:

[20] Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն, 2015-16, հիմնական արդյունքներ, ADHS/ՀՀ ԱՎԾ, 2017:

Մայրական մահացության ցուցանիշի վերջին գնահատականների համաձայն՝ Հայաստանում յուրաքանչյուր 1900 կնոջից մեկը հնարավոր է՝ մահանա հղիության, ծննդաբերության կամ հետծննդյան շրջանի բարդություններից:

- Վերջին երկու տարիների ընթացքում արձանագրված ծննդկանների մահվան դեպքերը վկայում են, որ ոլորտում առկա են լուրջ խնդիրներ ինչպես ծննդօգնության հասանելիության և վերահսկողության, այնպես էլ կանանց ու հասարակության իրավագիտակցության տեսանկյունից: Միայն 2016-ի ընթացքում հղի կամ ծննդաբերության ժամանակ ու դրանից հետո մահացել է 10 մայր: 2017-ի և 2018-ի տասը ամիսների ընթացքում գրանցվել է մայրական մահացության 7 դեպք:

- Հայաստանում լուրջ խնդիր է մնում առողջապահական ծառայությունների սահմանափակ ֆինանսական մատչելիությունը, որը նախևառաջ վերաբերում է կանանց, քանի որ նրանք, տղամարդկանց համեմատ, առողջապահության հետ կապված ավելի մեծ ծախսեր են կրում:

- Կանանց անիրազեկությունը ընտանիքի պլանավորման ժամանակակից մեթոդների մասին և ի հետևանք հղիության արհեստական ընդհատումների թվի փաստացի մեծացում, ինչը շարունակում է մնալ ընտանիքի պլանավորման ամենատարածված միջոցը: Ժամանակակից հորմոնալ հակաբեղմնավորիչները թանկության պատճառով մատչելի չեն Հայաստանի կանանց համար, 1000 կանանցից միայն 5-ն են օգտագործում դրանք[21]:

- Կանանց շրջանում օնկոլոգիական հիվանդությունների ժամանակին բացահայտման և որակյալ բուժման խնդիրը շարունակում է մնալ առողջապահության առավել արդիական հիմնախնդիրներից մեկը:

- Վիճակագրական տվյալների վերլուծությունը վկայում է, որ չնայած ձեռնարկվող միջոցներին, կանանց վերարտադրողական առողջությունը վերջին տարիներին վատթարանում է: Ավելի հաճախ են հանդիպում հղիության և ծննդաբերության բարդությունները: Աճում է ինքնակամ և բժշկական ցուցումներով հղիության արհեստական ընդհատումների, վաղաժամ ծննդաբերությունների քանակը: Ծննդաբերության ընթացքում պահանջվում է վիրաբուժական միջամտություն 43%-ի դեպքում, որոնցից 22%-ը բաժին է ընկնում կեսարյան հատմանը[22]:

Առաջարկություններ

- Բարձրացնել ծննդօգնության ծառայությունների որակը և վերահսկողությունը, ինչպես նաև մայրական առողջության մասին իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցներ ձեռնարկել՝ մայրական և մանկական մահացությունը կանխարգելելու նպատակով:
- Ընդլայնել կանանց վերարտադրողական առողջության վերաբերյալ իրազեկության բարձրացմանն ու հիվանդությունների կանխարգելմանն ուղղված ծրագրերը, այդ թվում՝ «Վերարտադրողական առողջության բարելավման ազգային ծրագիրը»:
- Ընդլայնել «Շրջիկ գինեկոլոգիական ծառայության» և «Շտապ մանկաբարձական օգնության» համակարգերը՝ դժվար հասանելի և աղքատ շրջանների բնակչության համար:

[21] Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի իրականացումը Հայաստանի Հանրապետությունում 2009-2012 թթ. ընթացքում: Այլընտրանքային զեկույց.- Եր.: Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, 2014
[22] Նույն տեղում:

- Բարձրացնել սոցիալապես անապահով կանանց իրազեկությունը պետության կողմից անվճար հիվանդանոցային բուժօգնության ծառայությունների տրամադրման մասին:
- Ընդլայնել պետպատվերի շրջանակներում կանանց պարբերական կանխարգելիչ զննումների անցկացումը:
- Ապահովել առանց բժշկական ցուցման պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման քաղաքականության մշակած ու ներդրած գործիքների հետևողական կիրարկումն ու օրենսդրության պահանջների կատարման հանդեպ վերահսկողությունը, ինչպես նաև հղիության արհեստական ընդհատում առաջացնող գրանցված և չգրանցված դեղերի նկատմամբ հսկողության խստացումը:
- «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում նախատեսել առողջապահության ֆինանսավորման արմատական ավելացում՝ հասցնելով այն առնվազն մինչև ՀՆԱ-ի 3%-ի: